

491.99-3

S-46

0 405-10

17

3223

ՍԻՐՈՆ Վ. ՏԵՐ ՄԱՆՈՒԷԼԱՆ

491.99-3


ՆՈ-46

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

ԲԱՌԱՓՆՋԻԿ

299



491.99-3  
S-46

Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՏ

Զարաշարժ Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1911

04.03.2014

3031

3223

493

143-S5



ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ԲԱՆԱՍԷՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Ակներև է, որ մեր արդի գրական լեզուն տակաւին ճոխացած և կազմակերպուած չէ. այս կարեւոր հարցի մասին մտածելու է իւրաքանչիւր մի բանասէր: Հարկաւ լեզուն կճոխանայ և իւր բնական զարգացմամբ կընթանայ, եթէ նա շարունակ անունդ ստանալու լինի մեր ժողովրդական գաւառաբարբառների անսպառ գանձից և նրա ստեղծագործող ոգուց և որպէս աւանդ անխառն պահած դարձուածքներից և նախնական բառերից, և այդ ժամանակ միայն կհարստանայ և կը զօրեղանայ մեր գրական աշխարհիկ լեզուի կենսունակ ոյժը: Իսկ այդ ցանկալի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լայն ուսումնասիրութիւն ազգային գաւառաբարբառների:

Եւ նուաստ լինելով Արարատեան աշխարհի և նրա Երասխանովտի բուն բնիկների գաւառներից, ցանկացայ համեստ ոյժերիս չափով նպաստած լինել գործին, ուստի ձեռնարկեցի սոյն բառական հաւաքածուի աշխատանքին:

Թէպէտ դեռ նախանցեալ տարուանից հայ ազգագրական ընկերութիւնը հետաքրքրուելով՝ քանիցս ցանկութիւն յայտնեց հրատարակել իմ այս համեստ աշխատասիրութիւնը, սակայն ոչ բոլորովին պատրաստ լինելու պատճառաւ յետաձգուեց:

Բարեբաղդաբար ամսոյս 5-ին Անիի վերակենդանացնող անխոնջ վաստակաւոր պրօֆեսոր Մառը՝ իւր Ս. Էջմիածնին տուած գիտական նպատակով կատարուած այցելութեան հետաքրքրուում է և իմ սոյն համեստ գործով և արտայայտելով հանդերձ իւր գոհունակութիւնը՝ խորհուրդ է տալիս ինձ չսպառելու այլ ևս բառական հաւաքածուիս վախճանական տպագրութեան, այլ միայն շտապել օր առաջ լոյս ընծայել նախ հաւաքածու բառերի ցանկը, որը շատ հետաքրքրական է ընդհանրապէս, ապա մտածել լիակատար տպագրութեան փութացման, որ կարող է դարձեալ յետաձգուել թերեւ:

Եւ ես հետեւելով յարգելի պրօֆեսորի յայտնած խորհրդին, փութացայ տալ նախ բառերի սա չոր ու ցամաք ցանկը:

Բայց և այնպէս՝ մի թեթեւ/դաղափար տուած լինելու համար արգոյ ընթերցողներին համեստ երկասիրութեան ամպին, ցանկի վերջում, իբրեւ նմուշ, դրի մի քանի բառեր իրենց հակիրճ բացադրութիւններով և օրինակներով:

Բառգրքումս ձեզ կպատահի տեսնել և սոսկ սովորական բառեր՝ ինչպէս են՝ «գալ, տալ, ել, վարել, վաքաղ, էշ, կեր, բամբ, ծափ, անհոգ, ծիծեռնակ, Մարկոս, Մակար... որոնք լուսաբանուած են սովորաբար իրենց ցարդ ոչ յայտնի ուշադրաւ նշանակութիւններով:

Կան առհասարակ և դրացի հնազոյն ազգերից փոխ առած և համարեան միջազգային ընդթ ստացած բառեր: Կպատահեն նոյնպէս և այնպիսի բառեր, որ թէպէտ բառգրքերում կան՝ սակայն ուղիղ մեկնուած և բացատրուած չեն ըստ ժողովրդականին:

Իսկ այն մի քանի նշանակալից բառերն, որպիսիք են՝ «գարտախուր, խաւարտ, խաւարծի, հաւացն, հաւ, վճենից, ձեռնէս, երկայնադէզ, սէփծուղ, արեգակնակ, կոնու, կուտից, ձիւնական»... որ կիրարկուած կան խորհրդացոյց միայն՝ բացատրուած են ընդարձակ լուսաբանութեամբ և առանձին գլուխներով իմ կազմած խորհրդացու նորագոյն լուսաբանութեան մէջ:

Թէ աւաջին և թէ երկրորդ համեստ աշխատասիրութիւններ իստ ապագրութեան գործը սպասում է իւր մեկենասին:

Բառական հաւաքածուս—«Բառափնջիկ» մասամբ յայտնի է պ. պ. Ս. Մալխասեանցին, Գ. Տէր Մկրտչեանին, Ե. Լալեանցին, Ա. Եղեկեանցին, Ա. Ահարոնեանցին, որպէս և Ս. Մանգինեանցին՝ որն առաջին անգամ տեսնելիս՝ ուրախացա՛ցած բացականչեց. —«սա մի նոր գիւտ է հայ լեզուի համար»: Իսկ աւելի քան ի մօտոյ ծանօթ է Սրժ. Ե. Ա. ք. Գեղամեանցին՝ (տես Հովիւ 1908 № 21):

1911 թիւ սեպտեմբեր

Ս. Լեւոնյան:

Սիօն վարդապետ Տեւ Մանուկեան



# ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿԸ

### ԲԱՌԱՓՆՋԻԿ

|           |              |           |            |
|-----------|--------------|-----------|------------|
| Ա.        | Ա.կիշ        | Առատամ    | Բալաք      |
| Աբայ      | Ակլատիկ      | Ասկեարի   | Բազրիկ     |
| Աբաչի     | Ակլէ-տուկէ   | Ասպարակ   | Բազկաթեր   |
| Աբաւոր    | Ակնկալ       | Ատէ, ատի  | Բազկաթթու  |
| Աբէր      | Աղլ          | Ատրկուիլ  | Բալուլ     |
| Աբով      | Աղնաղանձ     | Արաժան    | Բախեայ     |
| Ագուգայ   | Աղցան        | Արախչին   | Բահափոր    |
| Ագապ      | Ամանլուիկ    | Արամագի   | Բամբ       |
| Ագէ, ազի  | Ամանոր       | Արգատ     | Բամբաչ     |
| Ագիզ      | Ամբաղ-զամբաղ | Արընլուիկ | Բանջար     |
| Աղնաւուր  | Ամբոլ        | Արկոտ     | Բասպինդ    |
| Աժդահա    | Ամբոլչի      | Աւարա     | Բառօշ      |
| Ալաժըհար, | Ամրահ        | Աւելարան  | Բանջարաքաղ |
| Ալանի     | Անգիւման     | Ափեղ-ցփեղ | Բար        |
| Ալբուխարի | Անթրոց       | Ափլըփորեղ | Բարաքիւն   |
| Ալուան    | Անժուռ       | Ափօ       | Բարաւուն   |
| Ալչու     | Անհոգ        | Աքաշ      | Բարդան     |
| Ալրմադիկ  | Անմալար      |           | Բարկ       |
| Ախառ      | Անդալիս      | Բ.        | Բարկակտրէք |
| Ածան      | Աչքաճլունս   | Բաբա      | Բարուանէկ  |
| Ածիկ      | Ապուկել      | Բալան     | Բաֆայ      |
|           | Աչլիկ        | Բալան     | Բեխ բեղ,   |
|           | Առադաստ      | Բալավար   | Բզիկ       |
|           |              |           | Բէբէ       |

|           |            |            |          |
|-----------|------------|------------|----------|
| Բէլուժ    | Բորբոռ     | Պէժ        |          |
| Բէդ       | Բորբորիտ   | Պէհրայ     |          |
| Բէր       | Բու        | Պէշ        | Գ.       |
| Բիթիկ     | Բուդ       | Պէրշակ     |          |
| Բիսու     | Բուզմայ    | Պըժ-զըժ    | Դաբաղ    |
| Բիսնու    | Բուկ       | Պիդ        | Դախ      |
| Բիժի      | Բութիկ     | Պիժ        | Դաղդաղան |
| Բիհր      | Բութբրթալ  | Պիլայ      | Դամբիլ   |
| Բիհր      | Բունել     | Պիլ        | Դանաւ    |
| Բիճ       | Բրդօշ      | Պիւզամ     | Դաստայ   |
| Բիհր      | Բրիշակ     | Պիւռ       | Դափ      |
| Բիրադի    | Բրուզ      | Պիլլան     | Դեհնաւ   |
| Բլբլալ    | Բօբօ       | Պիլան      | Դեղդիւր  |
| Բլբուլ    | Բօդ        | Պիլառու    | Դէզ      |
| Բլթիկ     | Բօդ        | Պիլառէն    | Դէլ      |
| Բլթիկ     | Բօլ        | Պիլուլ     | Դիլակ    |
| Բլիթ      | Բօլսախ     | Պիլաւ      | Դիսուկ   |
| Բլիոնել   | Բօռ        | Պիմուիլ    | Դիդընալ  |
| Բլիւր     | Բօրան      | Պողաղարան  | Դոխ      |
| Բլուլ     |            | Պործաւել   | Դուզմայ  |
| Բլոշ      |            | Պորանուկ   | Դուռդ    |
| Բկատ      |            | Պութանաւոր | Դուռուժ  |
| Բմբուլ    | Գ.         | Պուռ       | Դալու    |
| Բնաղուն   |            | Պշիլ       | Դրինդ    |
| Բնաղէն    | Գազ        | Պուել      | Դրիշակ   |
| Բնդբընդել | Գազագել    | Պուոն      | Դրնդէզ   |
| Բշաիկ     | Գալ        | Պուոդ      | Դրնկօզայ |
| Բոզոն     | Գաճաճ      | Պուռզ      | Դօդ      |
| Բուլի     | Գառնարած   | Դրանակ     | Դօլ      |
| Բուլիւ    | Գեանդալայ  | Գւգուալ    | Դօշակ    |
| Բուռլ     | Գեարմակ    | Դօզ        | Դօշապ    |
| Բուլի     | Գեաւար     | Դօմբ       |          |
| Բոշաղ     | Գեբանդաւոր |            |          |
| Բորբ      | Գիլի       |            |          |
| Բորբել    | Գիլար      |            |          |

|                                  |            |                  |
|----------------------------------|------------|------------------|
| Զիկտիկ                           | Թաղկիշ     | Թնթիւնել         |
| Զկրալ                            | Թաղկուշ    | Թնթիւնիկ         |
| Զղղիկ                            | Թաճ        | Թնկթընկալ        |
| Զոխ                              | Թան        | Թոլ              |
| Զոպայ                            | Թանշ       | Թոլ-թոլ          |
| Զուգել                           | Թառ        | Թոկ              |
| Զուզայ                           | Թառակ      | Թոնթրալ          |
| Զուզակ                           | Թառ-սպիտակ | Թոշ              |
| Զօդ                              | Թառայ      | Թորթթօփ          |
| (Sactuca sativa) Զօլ             | Թառանշ     | Թուացնել         |
| Երեսահարք                        | Թարմ       | Թութակ           |
| Երբնուկ                          | Թարէք      | Թութուշ          |
| Երես-քաշ                         | Թարժաժ     | Թութուշիկ        |
| Երկայնադէզ                       | Թացան      | Թուսիկ           |
| Երկու-մատ                        | Թափթափայ   | Թուսս            |
| Երեքնուկ                         | Թաք        | Թուսիկ           |
| (Trifolium) Էշ                   | Թաքեայ     | Թրթնշուկ         |
| Էշարած                           | Թաքիլան    | (Oxolis-Acetosa) |
| Էտ                               | Թելուկ     | Թրմիւ            |
| Էտոց                             | Թեղ        | Թիթիւփան         |
| Էրէթուկ                          | Թեռ        | Թօթօ             |
| Էրի                              | Թեր        | Թօխան            |
| Էրբ                              | Թերմունք   | Թօխի             |
|                                  | Թերտել     | Թօռ              |
|                                  | Թերացից    | Թօռթայ           |
|                                  | Թէժ        | Թօփ              |
|                                  | Թեշի       | Թօփիկ            |
| Ընկերք                           | Թիթեն      | Թօփուկ           |
| Ընկնաւոր                         | Թիլիկ      | Թօփուկ           |
|                                  | Թիմար      |                  |
|                                  | Թիսմօուրս  |                  |
| Զիւան                            | Թազուճակ   | Թիւ              |
| (Cephalaria-ta-<br>tarica) Զիլան | Թակեալ     | Թիւայ            |
|                                  | Թաղ        | Թիւլան           |
|                                  | Թաղար      | Թմբիկ            |
|                                  |            | Թանդ             |

|           |              |               |
|-----------|--------------|---------------|
| Փանդրոտ   | Լիսեն        | Խոզարած       |
| Փրտանք    | Լիտր         | Խոնի          |
|           | Լիցք         | Խոպուպ        |
| Խ.        | Լիտիկ        | Խոռոմ         |
|           | Լծառ         | Խորոտ         |
|           | Լծկան        | Խոտահարք      |
| Խլիկ      | Լկամ         | Խորովու       |
| Խծաշարուկ | Լկել         | Խորովել       |
| Խշխան     | Լկլլկան      | Խումար        |
| Խշղ       | Լկտուած      | Խոնջիկ մոնջիկ |
| Խշոտուկ   | Լկտի         | Խուրջին       |
| Խշուկ     | Լկար         | Խոնանալ       |
|           | Լղլղան       | Խուլլի        |
|           | Լղճորել      | Խչմար         |
| Լ.        | Լղպոր        | Խռոտ          |
|           | Լղպորել      | Խտիտ          |
| Լախտ      | Լճկել        | Խրիկ          |
| Լակ       | Լմել         | Խրճաւոր       |
| Լակոտ     | Լմլմել       | Խրտավիլակ     |
| Լամբակ    | Լմփոշ        | Խօրտ          |
| Լամփառ    | Լուլ         | Խօրխօղի       |
| Լամփո     | Լուլա        |               |
| Լաշ       | Լուլէյին     |               |
| Լաշառ     | Լորիս        | Շ.            |
| Լառի      | Լուրիկ       |               |
| Լարան     | Լակել        | Շագար ծաքար   |
| Լափ       | Լպուտ        | Շալապատիկ     |
| Լափա      | Լուուի       | Շալք          |
| Լափին     | Լվլլվալ      | Շակ-ասեղ      |
| Լափլէզ    | Լփոտ         | Շաղ կամ կանչ  |
| Լէշ       | Լօզ          | Շաղկաքաղ      |
| Լընկ      | Լօշտակ       | Շառզարդար     |
| Լիթոն     | Bryonia alba | Շառս          |
| Լիթ       | Լօք          | Շափ           |
| Լիլ       | Լօք-լօք      | Շեղ           |

|             |                |               |             |
|-------------|----------------|---------------|-------------|
| Շէտուկ      | Կալուր         | Կծպծել        | Կուտապ      |
| Շէրք        | Կախանատուն     | Կծող          | Կութալ      |
| Շթուել      | Կակա           | Կծղել         | Կութնել     |
| Շիղ         | Կակալ          | Կծուիլ        | Կոճոն կրճոն |
| Շիծառ ծիծեն | Կամաէն         | Կծօխուր       | Կոռթ        |
| Շիծենակ     | Կանթ           | (Berbezis vul | Կոթթուկ     |
| Շիւ-ծիւ     | Կանչ           | garis)        | Կտի         |
| Շլանք       | Կապառ          | Կզան          | Կտուր       |
| Շլէպ        | (Cappafi aher- | Կզճորել       | Կտտոր       |
| Շլընդալ     | bacca          | Կճեպ          | Կրէճ        |
| Շլծլալ      | Կապտաթեռ       | Կճուճ         | Կրէտ        |
| Շլծուլ      | Կառեպան        | Կնուներ       | Կրճոն       |
| Շլկուիլ     | Կատիկ          | Կշկըռել       | Կրտան       |
| Շկլլթել     | Կարմրաթեռ      | Կոլոն         | Կօհօլ       |
| Շկլուլթ     | Կարկաճ         | Կոլոտ         | Կօմբօ       |
| Շկլակին     | Կարկուճ        | Կոկոն         | Կօմբալ      |
| Շղրտալ      | Կեծ            | Կոճկապար      | Կօպալ       |
| Շղծամ       | Կեմար          | Կոնարկ        | Կօտորան     |
| Շմրաուլունք | Կենտ           | Կոնկատալ      | Կօտ         |
| Շմրկտալ     | Կենտապար       | Կոպառ         | Կօտիկ       |
| Շնկնոց      | Կեռ            | Կոռոփ         | Կօրոտ       |
| Շուտաւել    | Կեռիք          | Կոսպանդ       | Կօփ         |
| Շուտրել     | Կեր            | Կոփարած       |             |
| Շուիկ       | Կերթ           | Կործով        |             |
| Շպտուն      | Կզանալ         | Կուել         | Ճ.          |
|             | Կէկլէթ         | Կութ          |             |
| Կ.          | Կթան           | Կում          | Հաբրիկ      |
|             | Կթնել          | Կուժ-կոտորուկ | Հալ         |
|             | Կլեպ           | Կուլայ        | Հալա-հալա   |
| Կաթնահոնց   | Կլթիկ          | Կունդ         | Հախ         |
| Կաժ         | Կլմբոզ         | Կունդիկ       | Համ         |
| Կալամէջ     | Կլնկօղին       | Կուռ          | Համալար     |
| Կալաշափ     | Կլուծ          | Կուշուռել     | Համալիլ     |
| Կալլիկուտ   | Կլօճ           | Կուռիկ        | Հայրան      |
| Կախան       | Կղտար          | Կուտ          | Հանաք       |

|             |                          |           |            |
|-------------|--------------------------|-----------|------------|
| Հանդարիկ    | Ձեիչ                     | Ճէրճրան   | Ճոթուել    |
| Հանդաւոր    | Ձիւաւոր                  | Ճըկուել   | Ճոկան      |
| Հասիլ       | Ձմէթ                     | Ճըւահան   | Ճոպան      |
| Հասլել      |                          | Ճթպլտիկ   | Ճորտ       |
| Հատուկութ   |                          | Ճթոնել    | Ճութ       |
| Հարկէւոր    | Ղ.                       | Ճիլալ     | Ճուտ       |
| Հարսնալեզու |                          | Ճիճուռ    | Ճըագթաթ    |
| Հարսնակուլ  | Ղաթարել                  | Ճիմ       | Ճըթ-ճըրթալ |
| Հարսնախօս   | Ղաշանդ                   | Ճինինի    | Ճօղուել    |
| Հարսնահիւր  | Ղաշապ                    | Ճիպոտ     | Ճօռ        |
| Հարսնամատն  | Ղզիկ                     | Ճիտ       | Ճօռթել     |
| Հարք        | Ղոթ                      | Ճիւ       |            |
| Հաւ         | Ղոէճ                     | Ճիք-ճքեր  |            |
| Հաւանդ      | Ղրփ                      | Ճլբինդ    | Մ.         |
| Հաւարած     | Ղրփել                    | Ճլերք     |            |
| Հաւկուր     |                          | Ճլըմկոտել | Մազաւոր    |
| Հէնք        | Ճ.                       | Ճլըլէկ    | Մալար      |
| Հէշան       |                          | Ճլորել    | Մալուլա    |
| Հէրիք       | Ճաթ                      | Ճլպտրիկ   | Մախող      |
| Հմայիլ      | Ճալաւ                    | Ճլվիկ     | Մախտայ     |
| Հնձուր      | Ճալբալաք                 | Ճլօթ      | Մակար      |
| Հնտաւոր     | Ճալւ                     | Ճլօլակ    | Մահլուճ    |
| Հողաթափ     | Ճամբարակ                 | Ճխան      | Մահրաբայ   |
| Հոնքուր     | Ճանկ                     | Ճխմրտել   | Մահրամայ   |
| Հորթարած    | Ճանկրթել                 | Ճխտել     | Մահրասայ   |
| Հորիք       | Ճանճապան                 | Ճղակ      | Մամալ      |
| Հորիզոն     | Ճանճուլ                  | Ճղել      | Մամուզ     |
| Հունց       | Ճաշ                      | Ճղճիմ     | Մայիլ      |
| Հուրհրատել  | Ճապաղ                    | Ճղնակոտոր | Մանած      |
| Հրհրուց     | Ճարճարտուկ               | Ճղրիկ     | Մանիչ      |
| Հօդ         | (Cichorium in-<br>tibus) | Ճմել      | Մանրացան   |
|             |                          | Ճմուռ     | Մաջառ      |
| Ձ.          | Ճարէկ                    | Ճմուտել   | Մաստակ     |
| Ձախիկ       | Ճաւիկ                    | Ճնճղրիկ   | Մատաղ      |
| Ձեռնահարք   | Ճաքել                    | Ճնճոթոց   | Մատնաշունչ |

|             |            |             |                |
|-------------|------------|-------------|----------------|
| Մար         | Մուր       | Նամուս      | Շիւ            |
| Մարանդաւոր  | Մուռ       | Նարմանազուկ | Շիւ-շիւ        |
| Մարանդի     | Մսացու     | Նարօտ       | Շիւար          |
| Մարագ       | Մըափել     | Նաւակատիկ   | Շինք           |
| Մարմանդ     | Մըթել      | Նաւասարդ    | Շլտիկ          |
| Մարկոս      | Մըթօշ      | Նեա         | Շմոլ           |
| Մարկոսաբուռ | Մըիկ       | Նեա դնել    | Շնթոնել        |
| Մարկոսառ    | Մըկաթ      | Ներկարար    | Շշմել          |
| Մարկոսաւոր  | Մըկել      | Նիհար       | Շշկուել        |
| Մաւի        | Մըլած      | Նմուշ       | Շողալ          |
| Մեալար      | Մըքուք     | Նուբար      | Շորշօփ         |
| Մգեղ        | Մօրամաղ    | Նուկի       | Շուխտայ        |
| Մզուկ       | Մօրամանդիլ | Նոււնուշ    | Շուշ           |
| Մզրախ       |            | Նօթ-նիաթ    | Շուլալ         |
| Մէրան       |            |             | Շուլուր        |
| Մըռ         | 3.         |             | Շպուտել        |
| Մթնաժեռ     |            | Շ.          | Շոնօդ          |
| Միւ         | Յիւ        |             | Շրիտ           |
| Միջինք      | Յիշ        | Շալախ       | Շրտել          |
| Միջնատուն   | Յարալէզ    | Շախկայ      | Շւօտ           |
| Միջնահաց    | (խրլէզ)    | Շահմար      | Շփլթոց         |
| Միլու       |            | Շաղաթաթախ   | Շօխախ          |
| Մկմըկոց     |            | Շաղուել     | Շօռ            |
| Մղեղ        | Ն.         | Շաղ-տալ     | Շօռան          |
| Մղլտալ      |            | Շանթել      | Salsola crassa |
| Մղրէզ       | Նազ        | Շառատ       | Շօրուայ        |
| Մշտուկ      | Նազար      | Շատրար      | Շօրօր          |
| Մոթալ       | Նազուք     | Շարմաղ      |                |
| Մոխրատ      | Նախշուն    | Շեպ         |                |
| Մոծակ       | Նախիւր     | Շէնք        | Ո.             |
| Մոծիլ       | Նախրատուն  | Շէք         |                |
| Մուշիկ      | Նախրատափ   | Շիլայ       | Ոռամատ         |
| Մուշտայ     | Նախրշի     | Շիշակ       | Ոռատամ         |
| Մուշտուկ    | Նամէր      | Շիպէք       |                |
| Մուշտառ     | Նանիկ      | Շիտակ       | Ոռատայ         |

|            |                 |                  |              |
|------------|-----------------|------------------|--------------|
| Ուքոգ      | Չթուոր          | Պարզկայ          | Պուճախ       |
| Ուքաց      | Չիւ             | Պարկապոս         | Պուճուր      |
| Ունանարք   | Չլպուր          | Պարպակել         | Պուճիկ       |
| Ուրձ       | Չղիւղպել        | Պէլ              | Պուճկած      |
| Ուղնկան    | Չոխարիկ         | Պէծ              | Պուտ         |
| Ուղուր     | Չողան           | Պիլիկ            | Պուռգ բուռգ  |
| Ուղուկ     | Salicornia her- | Պինչ             | Պուռնկ       |
| Ուլատիլ    | bacca           | Պիպ              | Պուտուկ      |
| Ուլարած    | Չոմչիկ          | Պլթիկ            | Պսպոսն       |
| Ուլիտիլ    | Չորթան          | Պլիկ             | Պտղունց      |
| Ուղտապան   | Չու             | Պլինկ            | Պտուկ        |
| Ումպ       | Չութ            | Պլուգ            | Պօլ          |
| Ունքուռ    | Չուշտրիկ        | Պլութ            | Պօլօլ-պօլօիկ |
| Ուտ        | Չուել           | Պլալան           | Պօղոսակ      |
| Ուրաղաւոր  | Չութել          | Պլուլ            |              |
| Ուրբաթախօս | Չութէ           | Պճեղ             |              |
| Ուրուր     | Չոփել           | Պճկել            | 2.           |
|            | Չրեխ            | Պճպճալ           |              |
| 2.         | Չրչըռ           | Պճկել            | Չախ          |
| Չաթան      | Չօռ             | Պնչաւտ           | Չահրայ       |
| Չաթել      | Չօռկտել         | Պնտուկ           | Չանջալ       |
| Չաթու      | Չօփ             | Պոգ              | Չանգիւլուճ   |
| Չալիկ      |                 | Պոգատ            | Չարջառ       |
| Չալաքի     | Պ.              | Պոգաւոր          | Չէպ          |
| Չալթուկ    |                 | Պոկել-պոկոտել    | Չէջ          |
| Չախչախ     | Պալ             | Պոկոն            | Չըհէզ        |
| Չայիւր     | Պահունի         | Պուճ-Պուճիկ      | Չըռ          |
| Չանաք      | Պաճ             | Պուճախ           | Չիգ          |
| Չանաքչի    | Պաճոտ           | Պուճուճակ        | Չիգր         |
| Չանչ       | Պաշ             | Պուպուգ          | Չնջիւել      |
| Չաւղառ     | Պաշաղ           | Պուլիկ           | Չոխ-Չոխի     |
| Չափիչ      | Պաշաղաւոր       | Պուտ             | Չով          |
| Չաք        | Պապուկ          | (Popaver Bhocas) | Չորեպան      |
| Չէշի       | Պատաւորուկ      | Պոթել            | Չուալ        |
|            |                 | Պոտոք            | Չուլ         |

|           |           |           |              |
|-----------|-----------|-----------|--------------|
| Չուհար    | Սարակոտիլ | Սոնապտուկ | Տաւարարած    |
| Չըլըռ     | Սարէկ     | Սոնել     | Տաւարազնա    |
| Չըզլիլի   | Սարծիլ    | Սոնի      | Տափան        |
| Չրիկ      | Սաքու     | Սոկուիլ   | Տափանաւոր    |
| Չրինգ     | Սաֆաւակ   | Սըսուռ    | Տափիլիկ      |
| Չրծակ     | Սեագնել   | Սքլել     | Տափոդ        |
| Չրկալ     | Սեուկ     | Սօված     | Տափտրփել     |
| Չրուոր    | Սեաւաւար  | Սօրսօրիկ  | Տափկնոցիկ    |
| Չրտուն    | Սեաւոր    | Սօմի      | Տաքար        |
| Չրջըռուկ  | Սէիգ      |           | Տեփուր       |
| Չօնջօլ    | Սէլուր    | Վ.        | Տընկուկ      |
|           | Սըլկացնել |           | Տընկտընկան   |
| Ռ.        | Սըրսըրթալ | Վարազ     | Տժվժիկ       |
|           | Սինի      | Վար       | Տիգ          |
| Ռամարգա   | Սիպիս     | Վարել     | Տիկին        |
| Ռաֆատայ   | Սլուկ     | Վերունի   | Տիկնախաղ     |
| Ռշտայ     | Սլալըստալ | Վզզան     | Տիկնակլունծ  |
| Ռուղայ    | Սխօխ      | Վէլ       | Տնտղել       |
| Ռումբ     | Սկըկալ    | Վիլակ     | Տուկուլակ    |
| Ռուք      | Սկըտալ    | Վլկել     | Տուճ         |
| Ռքել      | Սկուիլ    | Վտվտիկ    | Տուտ         |
|           | Սղալ      | Վռազ      | Տօպրակ       |
|           | Սմբուլ    | Վռիկ      |              |
| Ս.        | Սոպու     | Վռըշնել   | Տ.           |
|           | Սոխախ     |           | Յայել        |
|           | Սոխեռա    | Տ.        | Յան          |
| Սագարակ   | Սոխուկ    |           | Յանուր       |
| Սալայ     | Սոդնակ    | Տալ       | Յանքս        |
| Սալամ     | Սորել     | Տակ       | Յաքան        |
| Սամածակ   | Սուկտալ   | Տականք    | Յել          |
| Սամակալ   | Սուրայի   | Տաշնակ    | Յելաւոր      |
| Սամթեռ    | Սուրէյին  | Տաշտաղքէք | Յէթ          |
| Սամոտէն   | Սուրմա    | Տապարակ   | Յընգընդալ    |
| Սանդ      | Սուրֆայ   | Տարուբեր  | Յընգընդնոտիլ |
| Սանդերք   | Սալառ     | Տաւար     | Յընգնիլ      |
| Սատանակոխ |           |           |              |

|                  |             |                    |           |
|------------------|-------------|--------------------|-----------|
| Յնցխել           | Փմփուխ      | Քաղել              | Քոլոզ     |
| Յոռուկ           | Փնչալ       | Քախանաւոր          | Քոլոմատել |
| Յոռել            | Փնջիկ ֆնջիկ | Քաղ ուտել          | Քոլք      |
| Յըթել            | Փշաքաղուիլ  | Քաշել              | Քոռաակ    |
| Յըթող            | Փոթ         | Քաշովի             | Քոռակտել  |
| Յըթուկ           | Փոխինդ      | Քամովի             | Քոսորակ   |
| Յոկոլ            | Փչել        | Քաշալ              | Քոռապ     |
|                  | Փչան        | Քարթու             | Քոռախ     |
| Փ.               | Փոցխ        | Քարմաղ             | Քոռֆատյ   |
| Փալաս            | Փոցխակուռ   | Քաւթառ             | Քոռթուլթ  |
| Փալախայ          | Փուլթ       | Քելեխ              | Քոռաակ    |
| Փամփալ           | Փուլ        | Քերդան             | Քոռախ     |
| Փանջայ           | Փունջ-փնջիկ | Քերծ               | Քսքրատալ  |
| Փանջաքեաշ        | Փունջուխ    | Քեօզառ             | Քրջ       |
| Փառ              | Փուռնիկ     | Քէթիպայ            | Քրջոտ     |
| Փառտի            | Փուք        | Քէլք               | Քօլ       |
| Փարայ            | Փուքան      | Քէլել              | Քօտաել    |
| Փարատել          | Փռչոտ       | Քէնթիկ             | Քոռֆր     |
| Փարատիչ          | Փսորուիլ    | Քէշայ              |           |
| Փարխաշ           | Փսփստալ     | Քէթուկ             | Չ.        |
| Փափա             | Փսփսոց      | Քթախոտ             | Չդան      |
| Փեթակ            | Փրդօշ       | Քթէթ               | Չդակ      |
| Փէլփստուն        | Փքուիլ      | Քթկալ              | Չձ-օձ     |
| Փէյին            | Փօռ         | Քթփրթալ            | Չղը-ձիտ   |
| Փէշխորթ          | Փօփիլիկ     | Քիաքուլ            | Չջախ      |
| Փէսաղբէր         | Փօփօլ       | Քիւլակ             | Չջուք     |
| Փէքոտտ           |             | Քուլայ             | Չրուկ     |
| Փթփրնթալ         | Ք.          | Քիւլաշ             | Չրոշկտալ  |
| Փիլաւ            | Քալաջօշ     | Քիւլհան            |           |
| Փիշօ             | Քած         | Քիփ                | Փ.        |
| Փիտել            | Քածարած     | Քլքլուն            | Փալագ     |
| Փիր              | Քածարան     | Քծիպ               | Փաս       |
| Փիփիբթ           | Քաղալակ     | Քմծիծաղ            | Փըռոց     |
| Malva silvestris | Քախհան      | Քնճիթ              | Փռֆրոց    |
| Փլաւքամիկ        | Քաղահան     | Sesamum orientalis | Փռթոնայ   |

# ԲԱՌԱՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ ԲԱՌԱՓՆՋԻՑ

ԱՊՌԻԿԵԼ.—Յափշտակել, գջլել, շորթել, յանկարծակի վրայ հասնելով խելել (ինչ ապուկիչն ես եղել, երբ պիտի դադարես ապուկելուց՝ ապուկիչ, որ ապուկիչը մարդ դարձաւ, որ դու գառնաս):

ԱՌԱՔԱՍՏ.—Բացի իւր յայտնի՝ նաւային և հարսնարանի հարսանեկան առաքաստ նշանակելուց, նշանակում է և խաղողի այգու հնձանի ծիրանագոյն կաշն, ուր այգեկութիւն ժողովելով շեղ-ջում են քաղուած, հասուն ողկոյզներ (ձթերի) շեղջակոյտներն, որ և յետոյ սկսում են նախ հոլանի—մերկ ոտներով ուժգնապէս ջարդել-տրորել, խաղողն, ապա ձեռքերով, այդ ժամանակ արդէն՝ սկսում է սուզուելով քամուիլ քաղցուն (շիրէն) ծաքարի մէջ՝ առաքաստի և ծաքարի մէջ եղած աղուզովն:

Թէ առաքաստն և թէ ծաքարն (տաքար) շինում են քար ու կրից և սուզուում մաքուր կրով, և ապա՝ սեւտաւարի հալած ձարպով օծում բոլոր պատերն և յատակն, զերծ պահելու քաղցուն կրային սուաղի վատ ներգործութիւնից և առհասարակ անմաքրութիւնից:

(Արդե՞ք՝ հնձանային բոսորագոյն առաքաստն է առել իւր անունը՝ հարսնարանի հարսանեկան ծիրանագոյն, գեղեցիկ առաքաստից, ի՞նչ վերջինս է առել իւր սիրունիկ անունն՝ առաջնի վարդերանդ, ծիրանակարմիր պատերից և նմանաձև շինուածքից):

ԱՍՊԱՐԱԿ.—Ասիական բաների երկականջեայ ոտնատեղին, ասպարակներն ունին սլաքաձև կազմութիւն, շինում են առ հասարակ ամրագոյն փայտերից՝ գլխաւորապէս ծիրանենուց և դարաղաջից (սեւա ծառ): Ասպարակին՝ իւր կենտրոնում ունեցած պօլօլիկ (բոլորշի) միջնածակովն անց են կացնում բանի կոթով՝ բանի քիփ (կոթնատեղու) վերայ, ուր և քիփ (պիլիկ) ամրացնում են:

Ասպարակի մէկ կամ միւս ականջի վերայ է խիւում իւր ոտքի ուժգին հարուածով բահափորողն, եթէ բահափորն աջիկ է, աջ կողմի վերայ դնելով է փորում—թափհարում երկրի սրտի մէջ իւր սուր պողովատիկ բանովն. իսկ եթէ ձախիկ՝ ձախովն և այնպէս հերկագործում—փորում մայր հողը:

Տեղային ասպարակաւոր (քահանայ՝ իրենց շատ յարմարութիւններով աւելի քան պիտանացու են՝ թէ հին և թէ նոր դանազան ձևի և տեսակի բահերից, թէ հողային մշակութեան, հերկագործութեան՝ և թէ գիւղական շինութեան գործերի համար՝ մանաւանդ ցեխաբանութեան՝ (ցեխային գործերի) :

(Տղերք գարունը բացւում է, ձեր պատրաստութիւնները տեսէք... չմոռանաք մի քանի հատ էլ ծիրանի ասպարակներ շինել տալու, — թէ ծիրանի և թէ դարադաշի ասպարակներ շատ ունենք...) :

ԲԱՐԿԱՆՏՐԷՔ. — Նոր խնամիրացածների երկուստեք առնելիք հարսանեկան ծախքի նախահաշուի կազմումն և պայմանաւորումն՝ ինչ ձևով և եղանակով առնելիք ծախսարարութեան լինելն ուր և որոշում են և որակում, միմեանց փոխադարձ ընծայաբերութեան՝ տալն և առնելն նոյնպէս և մօրամանդիլի :

Բարկակորէքը սովորաբար տեղի է ունենում նշանադրութիւնից յետոյ, հարսանիքից առ առաւելն մի ամսաչափ առաջ :

— (Ձեր հարսանիքի բարկակորէքը վերջացրի՞ք — չէ՞ մեր բարկակորէքը դեռ եկող կիրակի է լինելու, կարելի է, որ մենք ըսկի բարկակորէք չանենք, մեր խնամին չի ուղում, որ մեզ դուր ծախսի տակ քցի, ասում ա, բարկակորէք-մարկակորէք հարկաւոր չի, ձեր հարսն ա, ոնց կուղէք տարէք, միայն մօր ծծի կաթը հալալ արէք, մի արժանաւոր մօրամանդիլ բերելով) :

ԲՆԱՂՈՒՆ. — Աշնանային օրերում՝ ամբողջ ձմրան համար ազացուած ալիւրն, հայի իւրաքանչիւր օջախ մեծ թէ փոքր մի անգամից աղալու է ամբողջ ձմերուան պաշար, նա մանաւանդ որ ձմերնեց բոլոր ջրադացները դադարում են աղալուց ջրերի սառչելու պատճառաւ :

— Շնու արէք, բնադունն աղացէք, ջրերը կարող են սառչել. — ցանքսին ենք բանդ (սպանում վերջանալուն), ջուալները պարապին, որ բնադուն բռնենք (լցնենք), մանաւանդ՝ որ մենք այստարի ամենաքիչն ութն խալուար բնադուն ենք աղալու... :

ԲՈՋԱՆ. — Բոլու, բոխու ցեղակիցն, սակայն նրանց ամենագնիւ տեսակն և ամենախորժահամը Բոջախն ունի առաւել քան կէս արշին երկայնութեամբ գալարուն, տափլիկ, ոսկեգոյն գօխ, ասեղնատերև գեղեցիկ սաղարթով, բուսնում է Մասեաց, Բարգոյ լեռնաշղթայի, նոյնպէս և Սուկաւէտ, Ծաղկունք, (Ալազաղ) լեռների բարձր գոփասուն լանջերում. բոջախը ոչ միայն իւր տեսակի, այլ բոլոր բոյսերի թագունին կարելի է համարել իւր ախորժահամ, քաղցրաթթուատ, առողջարար, գիւրամարս յատկութեան և հրապուրիչ տեսքի պատճառով :

Բոջախը ներկայումս շատ հաղուադիւտ է և գրեթե անհետանալու վտանգին է հասած իւր անվերջ խնդրակների ազահօրէն արմատախիլ անելու պատճառաւ, և հաղիւ դեղապետի համար ճարտում է, այն էլ մեծ դժուարութեամբ, մինչդեռ 30-40 տարիներ առաջ ծափերով թթու էին բռնում, այժմ գտածն էլ իսկոյն խաշում ուտում են և կրկնակի թանգ է ծախւում պանիրից անգամ \* :

Ք ԲՈՐԲՈՐԻՏ, որի արմատն է «բորբ»-ն, բորբն է օրօրոցի հաստ ներքնակն, բորբն՝ որպէս և օրօրոցային ներքնակի վերայ ձգւող շորերն ունեն կենդանից մի կոլոր ծակ, որոնց դարսուածքի միջով անցնում է շիպէկն՝ որը դրւում է երեխայի մէջն գէպի վար հոսեցնելու համար :

Մայրերն սովորաբար իրենց ձեռքի գործիքներն, որպէս մկրատ, մատնոց, ասեղաման, քորոցաման, ձեռքի հայելի..., նոյպէս և երեխայապատկան խաղալիքներ, որպէս և կոնֆէտներ պահում են սովորաբար բորբի տակ, մանուկը-կամաց խելքի գալով հետաքրքրւում է մօր սովորական բորբի վերաբերեալ գործողութեամբ, ինքն էլ օրօրոցից իջնելիս՝ սիրում է շատ՝ հետաքրքրուելու բորբով և նորա տակում պահուած առարկաներով և կոնֆէտներով, որով և սկսում է զարգանալ նորա մէջ հետաքրքրութեան հոգին, նոյն և անբաժան աճում է նորա հասակի հետ, և որի հետ էլ համարեան գերեզման է մտնում. այդպիսի բնաւորութեան տէր երեխաներին՝ մայրերը բորբորիտ են կանչում, և ոչ միայն երեխաներին, այլ հասակաւորներին և ծերերին անգամ :

Երբ երեխան չափը անցնում է բորբի մօլի հետաքրքրութեամբ՝ մայրը զայրանալով կանչում է. — հերիք չէ բորբորիտ! քրքրեա բորբի տակն, ինչ ա բորբը (կայծը) ընկել ա ջանդ՝ բորբորիտ! երբ էս բորբորիտից՝ ես պիտի ազատուեմ Աստուած իմ: Բորբորիտ՝ գործադրւում է և աւելի լայն իմաստով՝ հետախոյզի, հետաքրքրի, հետամտի, արարողի, վաւաշոտի, շինարարի, քանդակի: — Ինչ բորբորիտ մարդ է՝ — (գիտակցող մանրազննին ուսումնասիրող): — Երբեմն բացասականի մտքով. — թող կորի բորբորիտի մէկն ա (խառնակիչ) :

Միևնոյն տօնով տեսնում ենք գործադրուած Խորենացուց՝ յանձին աշխարհահռչակ, շինարար, վիհապանծ մեծ թագունի :

\* Եթէ ինձ կյաջողութեամբ պանել մի մեկենաս, այն ժամանակ հնարաւորութիւն կունենամ բառափնջիկս պատկերազարդ տպագրել տալու, ուր կլինեն նկարուած՝ յիշատուած բոյսերն, եւ ինչ որ անհրաժեշտ կը համարուն առ հասարակ :

Շամիրամի, որի մեծութեան խօսքուն վիճակներն են և Շամիրամահերաի (Վանի) անդոյգ ճարտարապետական մեծագործութիւնները (Խորենացի գիրք Ա. գլուխ ԺԵ.), ուր Շամիրամին՝ անուանում է այրասիրտ. կաթսա, բորբորիտ. — «այրասիրտն այն Շամիրամ, կաթսան այն Շամիրամ, բորբորիտն այն Շամիրամ», ուրեմն այդ բոլոր հակասական յատկութիւնները նա ունեցել է. և եթէ ուշի ուշով վերաբերուենք, կտեսնենք, որ բորբորիտն՝ աւելի շուտ հետախոյզի, հետաքրքրի, շինարարի՝ անունով է և իմաստով քան Նվառաշի:

Բորբ, որ միաժամանակ նշանակում է՝ կայծ, բոց՝ հոբ, կրակ, որից և ծագել է ոչ միայն բորբորիտն, այլ և բորբէն, բորբոն, բորբոքեն... որը և շատ՝ ըստ տեղւոյն գործադրել է Խորենացին՝ առնելով ժողովրդական բարբառից՝ յանձին Շամիրամի գերագոյն, գրական և բացասական առանձնախատկութիւններին:

ԹԱՂ. — Թաղ կոչւում են առհասարակ՝ վարունքի, ձմերուկի, սևի, դուղմի, դուղմի, շամամի բոյսերն և ոչ երբէք՝ բրդից լմած թաղիքներն (քէչայ): որ չգիտեմ որտեղից որտեղ՝ մեր լեզուաբան կրօնաւոր հայրերն մոծել են բառաբերում՝ թաղը՝ թաղիքի նշանակութեամբ:

Իսկապէս դարմանալի չէ արդեօք, որ այսչափ՝ կարևոր և ընդհանրապէս գործնական, աշխարհայայտ, անուշահամ, առողջարար, աննդալից՝ պտուղների ընդհանուր անուն կրող բոյսերի կոչն-անունն երբէք յայտնի չէ, ոչ միայն հին՝ կղերական՝ այլ և նոր աշխարհիկ գրականութեան լուսամբիւ վարիչներին:

(Զգոյշ մտիւր բոստանը, թաղերը չտրորես, թաղերին լաւ նայիր, ահա, ջուր չի ուզում, — չայրիկ մեր թաղերի մէջ մանկու ձոր չկայ, (ամպի պէս կապոյտ բարձրացել են, և վիշապ օձերի պէս գլուխները բարձրացրել, մարդ գարզանդում ա՛ տեսնելիս, երեւեղացեք որ փթանոց եմիշները թաղերի միջից չեն նկատուում, հէ՛ էլ որ չընենք. վէջը չի թաղերի. իսկ՝ եթէ ջրենք, կալող է ջուրը կծկլ թաղերին (դեղնացնի, փնասի):

Թաղ. — նշանակում է կամար, կարակն: Թաղ՝ նշանակում է գիւղի, քաղաքի մի մասն — կողմն, բայց ոչ ընտել լմած քէչայ, թաղիք:

ԿԵՄԱՐ. — Կեմարը նահապետական ժամանակներից փնացած՝ պարաններ և կեմեր (ջովեր) մանկու գործիք է, շինուած այծի կեռածայր եղջիւրից:

Կեմար պատրաստելու համար նախ ծակում են եղջուրի արմատի կողմի երկու ծայրն, ապա մի կողմիկ, մատնաչափ հաստ, թղաչափ երկայն, ողորկ, ամուր փայտ ամրացնում են եղջուրի վերայ, յետոյ նոյն երկարութեամբ մի լուսայ փայտ

(յատկապէս, շինած փորուած) հագցնում են վերան և սկսում են պտտեցնել: Նստում է մէկն և առաջը դնում է բուրդ, մազ կամ բամբակ, կամ թառամած նոր հնձած խոտ և սկսում է երկու ձեռքով բաց թողնել մանկու նիւթն, որի դիմաց կանգնած պտտանին՝ կեմարի ծայրով բռնելով նստողի արձակած նիւթն մանկ է սկսում, իսկ նա շարունակաբար թողնում՝ երբեմն 10-20 սաժէն երկայնութեամբ շարունակուած է մանկու գործողութիւնը, ի հարկէ խոտինը կարճ է լինում 2-3 արշինաչափ:

— Կեմարը պատրաստէք, ջովեր պիտի ոլորենք, տաւարին էլ կապեր. — Դու խոտը, մազը պատրաստի, ես հիմի կեմարը կբերեմ...:

ԿՈՃԿԱՊԱՐ. — Որ և է նոր շինութեան պատերի վերջաւորումն, ծայրակատարը, ուր պիտի արդէն ձգուին յարկի գերանները, կոճերը:

Յառաջ քան յարկածածք գերանների ձգումն՝ պատերի կոճկապարների վերայ, նախ երկու կողմից ձգում են քառակուսի տաշած երկայն փայտեր (նալեր) և այդ նալերը բոլորը միմեքով շաղկապում են միմեանց հետ անբաժան ամրութեամբ, որ շուրջնակի պատերի ամրողջութիւնը ամուր պահուի, ապա ըստ պատշաճի և յարմարութեան ձգում են յարկածածք փայտերը, գերաններն:

Կոճկապար՝ գեղեցիկ բարդ անունը՝ կարելի է մեկնել երկու տարբեր մեկնութիւններով՝ թէ ըստ մտացն և թէ ըստ բաժանման վանկիցն — «կոճ-կա-պար», որ նշանակում է՝ ոչ այլ ինչ՝ եթէ ոչ կոճերի պար բռնումն — շաղկապումն, յօդումն, միմեանց հետ, և արդարեւ ինչ հրաշալի բարդութիւն:

Իսկ երկրորդն՝ կարելի է բաժանել այսպէս. — «կոճ-կապ-ար», որ նշանակում է՝ կոճերի կապումն միմեանց հետ՝ հարկաւ ձգուած նալերի միջոցաւ, (կոճերն կապ արարեալ):

Ըստ էութեան երկուսն էս հանգուցաւորաբար բարդութիւններ են, որ գալիս են լուծելու բառանուան կաղմութեան տարբերութիւնը՝ այն է. — առաջին բարդութեան՝ արմատական բառը կաղմում է «պարը», երկրորդինը՝ «կապը»:

— Չեր տան շինութեան գործն ուր է հասել. — հասել է կոճ-կապարն. — է, որ բանը կոճկապարին է հասել, լաւ է. — մեր տան կոճկապարը վերջանալու վերայ է...:

ԿՈՐԾՈՎ. — Բամբակի բոլորովին հասունացած. չրթած ու բացուած կոկոնը, լուրը: Իսկ երբ կործովի միջից քաշուած հանուում, կամ թափուում է հնգաւորն, նա այլ ևս կործով չէ կոչւում, այլ «խճէճ», (կործովի պատեան):

Տեղային բամբակը կործովներով միասին են չանաքում, և

մարտը ջուրուց յետոյ միայն՝ ձեռքով դուրս քաշում հանում կործոյնների միջից հնգաւոր բամբակը: Մինչդեռ Ամերիկայի բամբակը չանաքւում է տեղ ու տեղն ծառերի վերայից՝ թողնելով կործովի պատեան խճէճները ծառերի վերայ:

(Բամբակների չանաքների ժամանակն անցնում է, չանաքաւորները բռնեցէք, կործոյնները փչանում են.—Անձրեւներ չկան կործոյնները չեն փչանայ...) \*

ԿՈՒՏ.—Թաժժայ, նորաթուխ հացերի պատահական գունդ-գունդ թափուածքներն բոլոր թոնրի մէջ: Կուտերը սովորաբար շներին են ուտեցնում, այդ իսկ պատճառաւ շներն երբ կուտ են նշմարում փռուած նոր լաւաշ հացերի մէջ՝ իսկոյն զգուշութեամբ մօտենում և վերցնում են, կամ ուտում են, կամ եթէ դեռ տաք է տանում դնում միւս կուտերի վերայ սառչելու:

Կուտ նշանակում է և սերմահատիկ.—փառք Աստծու այս տարի կալը-կուտը առատ է, ինչպէս է ձեր կալը-կուտը հաւաքեցիք.—չէ՛ անձրեւները յետ քցեցին մեր կալ ու կտի հաւաքումն...:

(Կուտ որպէս սերմահատիկ, հացահատիկ առ հասարակ՝ գործադրուել է և թորենացուց, իւր Բ. գրքի 7-րդ գլխում, սակայն թորենացու թարգմանիչ սրբազան Խ. Ստեփանէն չհասկանալով՝ թարգմանել է «ձիեր».) Նա չէ միայն՝ այդպէս ասողն, նոյնը կըրկնել են թորենացիով ցարդ բոլոր հետաքրքրուողները՝ թէ մեւրայինք և թէ եւրոպացիք՝ որոնք միևնոյն սխալանքի մէջ են ընկած, այս մասին կասենք ինչ պէտք է՝ մեր «նորագոյն լուսաւորանութեան» մէջ իւր տեղում:

ԿԻՆԷՃ.—Հաւերի ջրհօդ (ջրաւաղան), կրէճներն սովորաբար փորուած են լինում՝ ջրի կարասներին կից.—կրէճում ջուր չկայ, կրէճը ջուր լցրէք, էս կրէճը պիտի փոխուի, անպէտք ա, մի լաւ մեծ կրէճ դրէք՝ հաւերը մեղք են...:

(Սովորաբար բակի մի յարմարաւոր անկիւնում, բայց ոչ երբէք ջրի կարասի մօտ՝ հորուած է լինում և շների ջրաւաղանը—հօդը, ուր և լցւում է նրանց կերն (լափն), սակայն նա չէ կոչւում կրէճ, այլ հօդ, ուր լցւում է և ջուրը շների լակելու հա-

\* Հարկաւ այս եւ այսպիսի դիւզատնտեսական, որպէս կենսական շատ ու շատ բառեր պիտի խուսափէին, որպէս խուսափել են մեր նախնի մատենագրութիւնից, որպիսին վիճակուած էր միայն կուտակրօն կղերականութեան, որոնց մտաւոր եւ հոգեւոր դրաղմունքը պատոււ էր մի միայն կրօնի շուրջը եւ իւր վերացական զաղափարների եւ ոչ երբէք Աստուծոյ փառք աշխարհի եւ իւր աստուածամեան մարդկայնութեան եւ նրա կենսական բարիքների եւ կենցաղի:

մար, իսկ լաիւր լաիելու համար: Երբէք շունը չի ախորժի մօտանալ կրէճին, բայց հաւերը խտրութիւն չեն դնում, սակայն միշտ ենթարկւում են շների հալածանքին):

ԿՕՐՈՏ.—Կօրոտ նշանակում է՝ արդէն պատրաստի երեսած՝ աչն է երկիցս, երիցս՝ վարած, ցելած ցելի մակերևոյթի վերայով, վերջին երես վարածի հակառակ ուղղութեամբ՝ արօրով բացուած նոր ակունները:

Կօրոտն ակօսւում է միշտ հորիզոնական զուգաչափ հեռաւորութեամբ ընդգծուած ակուններով՝ յատկապէս սերմնացանի դիւրութեան և սերմի անսխալ և հաւասարապէս շաղ տալու (ցանկելու) համար:

Կօրոտները բացւում են ոչ առաւել քան երկու մարգի լայնութեամբ, առ առաւելն վեց արշին տարածութեամբ, որի միջի մի կողմի ուղղութեամբ ցանկելով դնում է, իսկ միւս կողմի միջի ուղղութեամբ՝ ցանկելով վերադառնում է, և այսպէս շարունակ:

Կօրոտից ծագել է և իւր բայն «կօրոտեմ, կօրոտել, կօրոտող», որպէս և կօրոտածն, անկօրոտն:

(Յանքսի օրերը մօտեցան, արդե՞ծ մեր ցիւրը կօրոտած են.—միամիտ կաց, բոլորն էլ երեսած ու կօրոտած են, մենք աներես, անկօրոտ ցիւ չունենք...:

ՄԱԼՈՒԽ.—Գութանի, սայլի, արօրի, փոցիսի, տափանի, լծան՝ հետ կապող կղանի երկու ծակ ծայրերը միմեանց հետ հանգուցող—կոճկող փայտեայ կոճակն:—

Մալուխները պատրաստում, շինում են սովորաբար ծիրանենու ամուր փայտից: Մալուխն ունենում է մօտաւորապէս երկու վերշոկաչափ երկայնութիւն, 4—5 սանտիմետր տրամագիծ, կոլորակ, պօլօլիկ՝ կոպալ գլխով:

Կղանը աջ և ձախ փաթաթելով լծան կենտրոնում անշարժ, պինդ ամրացրած երկու պտուղների վերայով և միջով, և երկու յատկապէս շինուած ծայրերը մէկը միւսի մէջ մտցնելով կոճկւում է անմիջապէս մշակի ձեռքում պատրաստ բռնած մալուխով, որով սայլը, գութանը... միացւում է լծան հետ և գործի դրւում:

Մալուխն իւր իսկ հարազատ նշանակութեամբ և իմաստով և գործադրութեան ուղիւ կղանակով՝ պարզապէս յիշատակուած կայ և աւետարանում՝ «գիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան մըտանել, քան մեծատան. յարքայութիւնն Աստուծոյ»:

Բայց սրբան ցաւալի է, որ մի այդպիսի պարզ և սովորական առարկան իւր իսկութեամբ՝ ոչ միայն անձանօթ է մնացել մեր գրականութեան, այլ մինչ իսկ ենթարկուել հրէշային այլ

ընդ այլոյ խեղաթիւրուած ընդհարութեան, ոմանք բացատրում են որպէս ձուլանի նշանակութեամբ, իսկ ոմանք ի դարմանս մինչ իսկ ուղտի, (տես Վենետիկեան բառգրքեր և առ հասարակ):

(Մի քանի ծիրանի լաւ մալուխներ շինել տուէք.— Ի՞նչ պէտք են մեզ նոր մալուխներ, մեր մալուխները դեռ մի քանի տարի էլ մալուխութիւն կանեն, թէ որ մալուխները միշտ կղանների վերայ պահեն, կղաններից չհանեն, չկորցնեն...):

Պատիւ և փառք հերկագործութեան և նրա արդար վաստակաւորներին, որ այսօր լուսարանում են մեզ մեր խաւարի մթութիւնները:

ՀԱՄԱՎԱՐ.— Համավար՝ նշանակում է ամենքը հաւասարապէս ի միասին, որը հասարակաց ամենագործածական բառերից մէկն է, և հոմանիշն է համակամ, համամիտ, համախորհուրդ, համահաւասար .. բառերի: (Համավար կանգնեցէք, համավար երգեցէք, համավար գործեցէք, համավար գնացէք, համավար կերէք...):

Շատ զարմանալի է, որ մի այսպիսի տարրական, զուտ ազգայնական բնոյթ կրող բառ՝ միանգամայն յայտնի չէ եղել աշխարհնոյ մեծ գիտնական և առաջին հայկաբան համարուած հայր Ալիշանին, և նրա լայն երկասիրութեան, որն երբ հետաքրքրուել է զբնիւրից՝ Կէլառիսի (Դարաչիչակայ) պատմական վանքերի արձանագրութիւններով, ուր գտել է արձանագրուած ի միջի այլոց «համավար սահմանեցաք...»: Կանգ է առել, և շատ աւարտութեամբ յետոյ՝ «համավար»ը համարել և կարծիք է որպէս անծանօթ բառ ինչ (տես Այրարատ երես 260): Մինչդեռ համավարն՝ լոյսի պէս պարզ նշանակում է՝ թէ մենք միաբան եղբայրներս՝ միաձայն հաւատութեամբ որոշեցինք, կարգեցինք, սահմանեցինք:

Ահա թէ ինչ է նշանակում զգալապէս հեռու-մեկուսի լինելն, և կալ-միադն հայրենի ս. հողից ու ջրից և նրա նուիրական պաշտելի օջախից, որպիսի անհեթեթ կացութիւնը ի ցաւ տակաւին շարունակուած է...

ՀԱՐՄԱՆԱԼԵԳՈՒ.— Հարմարեցուն՝ բարձրացողուն, սղոցարեւան, ասեղնատերե վայրի ծաղիկ է, բաժակաձև, անուշաբոյր, քաղցրահամ, փոքրիկ, մանուշակագոյն ծաղիկներով, ծաղկում է մայիսին և կաղմում է մինչ ջանգիւրումի ծաղկապուլիկը գեղազարդով ծաղիկներից (տես երեքնուկ):

Կարի շատ ուշագրաւ է հարմարեցունի բարդ անուան բառակազմութեան խորհրդաւոր բացադրութիւնը, և անս նա:—

(Իբր հին-հին դարերում մի անհամեմատ, լեզուանի հարս իւր անհնազանդ, չարաիզու բնաւորութեամբ՝ անծայր յուսահատութեան է հասցնում իւր բարեսիրտ սկեսուրին, և այն աստի-

ճան՝ որ նա այլ ևս չկարողանալով տանելու իւր հարսի արարքն՝ անիծում է ասելով՝— «Բեզ տեսնեմ բալամ՝ անլիզու ծաղիկ դառնաս, լեզուդ պուճուճակիցդ դուրս եկած» (ծործորակիցդ), և հարսն ենթարկուելով բարի սկեսուրի բարի անէծքին, ոչ օձ, ոչ կարիճ, այլ ծաղիկ է դառնում—պուճուճակից դուրս եկած՝ պապապանծուած լեզուով):

Ահա թէ ի՞նչպէս է բացադրում հայ ժողովրդական լեզուն, ժողովրդական հոգեբանութիւնը հարսնալեզուի խորհրդաւոր անուան ծագման՝ խրատական բացադրութիւնը:

Եւ ի զարմանս կարի շատ ի դէպ համապատշաճ է, հարսնալեզուի բնական կազմութեան: Արդարեւ այդ ծաղիկն ունի իւր շուշանաձև կաղմութեան բաժակի յետին ծայրում՝ քամակից՝ ծործորակի կողմից՝ մի կոլորիկ-բոլորիկ, սուր և կոշտ՝ դուրս ցցուած լեզուակ. աւելի ճիշտն ասած՝ մի ծաղկածին լեզու—լեզուակ խօսուն խորհրդաւորութեամբ:

Հարմարեցունի ծաղիկը բացի իւր գեղեցիկ տեսքից, անուշաբոյր հոտից, օժտուած է ծառայելու և որպէս համեմունքի, զլիսաւորապէս կաթն-ապուրի և մածն-ապուրի հետ:

ՆԱՆԻԿ.— Օրօրոցի մանկիկների մայրական, անուշաձայն, քնաբեր օրօրները՝ սովորաբար նանիկ են կոչուում կամ նանիկներ, որպիսիք իրենց մեղմիկ, մեղմիկ, թախծազին ու մարմանդիկ, խորհրդաւոր, բազմազան գալարումների ել և էջերով ընդարմացնում են յուզուած ու չարացած մանկանը և անոյշ-անոյշ քուն բերում իրենց մեղեդաձայն դայլայլիկներով:

Նանիկները չեն պատկանում արհեստականօրէն հեղինակած մեղեդիներին, տաղերին, երգերի կարգին, այլ նրանք ուղղակի մայրական բնազդի և զգացմունքների, սիրոյ հեռանկատ իղձերի, քաղցր երազների, և որ զլիսաւորն է մայրական մեծ և փոքր վշտերի թարգմանն են, որ ծարաւսրտի և հոգու կաթոգին: Վառ տենչերից բղիթում են հագար և մի զմայլեցուցիչ գեղգեղանքներով:

Նանիկն ոչ այլ ինչ է, եթէ ոչ Նանէի, Նանիի՝ փոքրացուցիչն, այն է մեր երեմի կենաբաշխ, կենսաբեր Մայր—Նանէ՝ կենդանաբար աստուածունու անուան քաղցր յիշատակութիւնը, որ այսօր բարեբաղդաբար տակաւին կրում է հայ օջախի և նրա օրօրոցի անքուն պահապան հրեշտակ պաշտելի մայրը:

(Նանի ջան.— Ի՞նչ ա ջանի ջան! նանք քեզ մատաղ, նանիի արեւ—արեգակ, յոյս—ապուէն բալէն. նանի ջան! նանիկ աստ, թող երեխէն հանգստանայ.— Ա՛ բալիկ ջան, նանիկի սիրտ թողել են...:

ՇՈՒՇ.— Ձի նշանակում երբէք շիշ. ըստ թիւը մեկնութեան մեր բառերից, այլ նշանակում է ուղղակի ցորենների շեղջ, կալից նոր դուրս եկած սրածայր մարգարտանման ցորենաշեղջն:

հայտնաբերելու համար և արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին

Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին

Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին

Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին

Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին  
Հայտնաբերվեցին արդեն 1880 թ. հունիսի 1-ին

ՀՀ Ազգային գրադարան



NL0247242

5031